ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 402-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 341-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում (բնակավայր՝ Արդենիս) քաղաքացի Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարված բնակավայրերի նպատակային նշանակության շինությունները (բնակելի տուն, անասնաշենք) եվ նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասը նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով կառուցապատողին վաճառելու մասին» թիվ 341-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս բնակավայրում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-017-0004-0010 կադաստրային ծածկագրով 0,12431 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի

սեփականությունը համարված 73,6 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 82,8 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը (վկայական N 03082023-08-0027, հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ամասիա համայնք, գյուղ Արդենիս 7-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հողամաս) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի կարգով 159800 (հարյուր հիսունինը հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ հողամասի և 251,491 (երկու հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ շինության համար, ընդհանուր 411291 (չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել կառուցապատողին՝ քաղաքացի Ռաֆիկ Վոլոդյայի Մանուկյանին /նույնականացման քարտ՝ 010574770, տրված՝ 021 կողմից, 30 հուլիսի 2018 թվականին, հաշվառման հասցե՝ գյուղ Արդենիս, 4-րդ փողոց, տուն 4/ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 403-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՂՋԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 5-ՐԴ ՓՈՂՈՑ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի 9-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին 2023 թվականի դեկտեմբերի 19-ին Կարինե Անդրանիկի Թորոսյանի կողմից ներկայացված դիմումը

որոշում եմ՝

Կարինե Անդրանիկի Թորոսյանին տալ շինարարության թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի, Ողջի բնակավայրում 2-րդ փողոց թիվ 19/1 հասցեում խեցգետնի արտադրամասի կառուցման 4-րդ կատեգորիայի շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 404-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ224-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա Համայնքի Ջրաձոր բնակավայրում տեղակայված Գրետել Գալուստի Հարությունյանի, Հակոբ Լիպարետի Հարությունյանի և Մարիամ Լիպարիտի Հարությունյանի բնակելի տան և կից շինության նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու և ճանաչելու մասին» թիվ 224-Ա որոշման բովանդակությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Վերականգնել և ճանաչել Գրետել Գալուստի Հարությունյանի / ծնված 10.12.1936 թվականին, անձնագիր՝ AN0392951/, Հակոբ Լիպարետի Հարությունյանի / ծնված 10.12.1968 թվականին, անձնագիր՝ AR0556837/, Մարիամ Լիպարիտի Հարությունյանի / ծնված 10.12.1985 թվականին, անձնագիր՝ AR0486319/ սեփականության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ջրաձոր բնակավայրի 5-րդ փողոց, թիվ 11 հասցեում 0,09697 հեկտար մակերեսով հողամասի վրա գտնվող 72,50 քառակուսի մետր մակերսով բնակելի տան, 4,10 քառակուսի մետր մակերսով ծածկի, 71,03 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքի, 2,20 քառակուսի մետր մակերեսով աստիճանի, 1,40 քառակուսի մետր մակերեսով աստիճանի նկատմամբ:

2. Հողամասի սահմաններն որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի վրա:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 405-Ա

ՍԱՐԳԻՍ ՍԱՄՎԵԼԻ ԱՂԱՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐԴԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սարգիս Սամվելի Աղայանի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սարգիս Սամվելի Աղայանին 2023 թվականի դեկտեմբերի 25-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բերդաշեն բնակավայրի վարչական ղեկավար:
2. Աշխատավարձը՝ ըստ հաստիքացուցակով սահմանված դրույքաչափի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«25» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 406-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 48-րդ, 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արա Խաչատրյանի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը

ո ր ո շ ու մ եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն բնակավայրում տեղակայված, Արա Խաչատրյանի սեփականությունը հանդիսացող, 08-035-025-002 կադաստրային ծածկագրով 0,117 հեկտար ընդհանուր մակերեսով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն , 3-րդ փողոց, 10 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«27» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22925, service.amasia@gmail.com amasia.arpi@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 407-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-010-0074-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,01096 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՎԱՀՐԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով.

որոշում եմ՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Սյուզաննա Վահրամի Աբրահամյանի սեփականության իրավունքով պատկանող Ամասիա համայնքի, Ամասիա բնակավայրի 25-րդ փողոց, թիվ 23/3 հասցեում գտնվող 08-010-0074-0137 կադաստրային հասարակական կառուցապատման գործառնական նշանակության կառուցապատված հողամասին (իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01032023-08-0021) հարակից համայնքի սեփականություն հանդիսացող 08-010-0074-0155 կադաստրային

ծածկագրով 0,01096 հեկտար հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչի հիմքով, այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 141,9 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ ինը տասնորդական) Հայաստանի Հանրապետության դրամ, 0,01096 հա հողամասի համար 1555 (հազար հինգ հարյուր հիսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Սյուզաննա Աբրահամյանին (նույնականացման քարտ՝ 003967015, տրված է 13.03.2015 թվականին, 022-ի կողմից):

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«28» դեկտեմբերի 2023 թվական

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 408-Ա

«28» դեկտեմբերի 2023 թվական

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերով.

որոշում եմ.

1.Վավերացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի 2024–2026 թվականների ռազմավարական ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Վավերացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի 2024 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելված 2-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«28» դեկտեմբերի 2023 թվական
գյուղ Ամասիա

Հավելված 1
ՀՀ Շիրակի մարզի Ամասիա
համայնքի ղեկավարի 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի թիվ 408-Ա որոշում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Ծրագրի առաջին տարի՝ **2024 թվական**
Ծրագրի վերջին տարի՝ **2026 թվական**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

2. Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ:

3. Այն հանդիսանում է Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

4.Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Ամասիայի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

5.Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Ամասիա համայնքի ղեկավարի հետ:

6.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Ամասիա համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Ամասիայի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Ամասիայի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

8. Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտորի պարտականություններ կատարողի առաքելությունն ու խնդիրներն են.

1) օժանդակել Ամասիայի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2) օժանդակել Ամասիայի համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3) տրամադրել վերահսկող մարմիններին Ամասիայի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4) օժանդակել Ամասիայի համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի ենթակա միավորների կողմից ներկայացված ռիսկերի գնահատումները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները և փոփոխությունները:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Ներքին աուդիտի գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն հրամաններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: Ամասիայի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

11. Ներքին աուդիտի հետագա զարգացման համար իրականացնվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներքին աուդիտորների մասնակցությունը լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Միավոր	Տարի	Ժամկետ (մարդ/օր)	Աուդիտի տեսակ	Ռիսկի խումբ
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2024	200	Համապատասխանության աուդիտ	Միջին
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2025	200	Համապատասխանության աուդիտ	Միջին
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	2026	130	Կատարողականի աուդիտ	Միջին
«Ամասիայի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ	2026	35	Համապատասխանության աուդիտ	Միջին
«Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2026	35	Համապատասխանության աուդիտ	Միջին
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2024	14	Համապատասխանության աուդիտ	Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2025	14	Համապատասխանության աուդիտ	Ցածր
Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	2026	14	Համապատասխանության աուդիտ	Ցածր

«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Բաբայան

Հավելված 2
ՀՀ Շիրակի մարզի Ամասիա
համայնքի ղեկավարի 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի թիվ 408-Ա որոշում

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Տարի՝ **2024 թվական**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների:

2. 2024 թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի 2024-2026 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա: Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2024 թվականի ընթացքում:

3. Տարեկան ծրագիրը սահմանում է 2024 թվականի ընթացքում Ամասիայի համայնքապետարանում իրականացվող ներքին աուդիտի առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4. Ներքին աուդիտի 2024 թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել հրավիրված անձի և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտորն ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

III. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

5. Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը մշակում և Ամասիա համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում 2024 թվականի Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտորի պարտականությունները կատարողի կողմից և վավերացվում Ամասիա համայնքի ղեկավարի կողմից:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6. Ամասիայի համայնքապետարանի ներքին աուդիտորի պարտականությունները կատարողի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝

1) շարունակական մասնագիտական վերապատրաստումը,

2) ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

V. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Ամասիայի համայնքապետարանում ներքին աուդիտի ստորաբաժանման, այդ թվում ստորաբաժանման ղեկավարի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ Ամասիայի համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և Ամասիա համայնքի համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

9.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է Ամասիա համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի գործունեությունը:

10.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է Ամասիա համայնքի ղեկավարին ներկայացնի առաջադրանքի հաշվետվություններ, որոնք լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

11.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարնին ներկայացնի հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով:

12.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմնին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 3-րդ ձևով:

13.Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են կազմում նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմնին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

Հ/Հ	Միավոր	Աուդիտի տեսակ	Խորհրդա-տվության տեսակ	Պլանա-վորված օրերի քանակ	Սկզբի ամսաթիվ	Ավարտի ամսաթիվ	Գործընթաց	Կցված աշխատակից	Պաշտոն	Ընդամենը մարդ/օր
1	«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ	Համապատասխանության աուդիտ		200	01/01/2024	31/12/2024	Բյուջետավորման գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	30
							Հաշվապահական հաշվառման գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	30
							Ծախսերի հաշվառման գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	20
							Աղբահանության գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	30
							Գույքագրման գործառույթ	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	40
							Գնումների գործընթաց	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	50
2	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	Համապատասխանության աուդիտ		14	01/01/2024	31/12/2024	Ներքին աուդիտի իրականացման չնախատեսված դեպքեր	Պատվիրակված անձ	Ներքին աուդիտոր	14

«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Բաբայան